

| | |
|--|--|
| Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը) | ՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ (6ՏՄԽ001) |
| ECTS կրեդիտ | 5 կրեդիտ |
| Դասընթացի պատասխանատու դասախոս | Արևշատյան Ն.Գ., տ.գ.թ., դոցենտ |
| Ուսումնառության վերջնարդյունքներ | <p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել ստատիկա և կինեմատիկա բաժինների հիմնական հասկացությունները, • բացատրել կամայական ուժահամակարգի պարզագույն տեսքի բերման արդյունքները, • հիմնավորել տարբեր ուժահամակարգերի հավասարակշռության պայմանները և թվարկել այդ համակարգերի հավասարակշռության հավասարումները, • նկարագրել շփման առկայությամբ մարմինների հավասարակշռության պայմանները, • սահմանել պինդ մարմնի ծանրության կենտրոնը և ներկայացնել նրա որոշման եղանակները, • ներկայացնել կետի կինեմատիկայի հիմնական տարրերը՝ կետի հետագիծ, կետի արագություն և կետի արագացում, • ձևարկերպել պինդ մարմնի պարզագույն շարժումները՝ համընթաց, անշարժ, առանցքի շուրջ, պտտական և հարթ զուգահեռական, • նկարագրել կետի բարդ շարժումը: <p><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • կազմել տարբեր ուժահամակարգերի հավասարակշռության հավասարումները, • որոշել ոչ ազատ մարմինների հենարանների հակազդումները տարատեսակ կապերի դեպքում, • տարբերակել տարածական ուժահամակարգի պարզագույն տեսքի բերման դեպքերը, • մատնանշել պինդ մարմնի ծանրության կենտրոնի որոշման ձևերը և դրանք կիրառել գործնականում, • մեկնաբանել կետի շարժման արագությունը և արագացումը: |

| | |
|------------------------------------|---|
| <p>Դասընթացի թեմատիկ ծրագիր</p> | <ul style="list-style-type: none"> • Բաղադրյալ կառուցվածքների հենարանային հակազդումների և մարմինների փոխազդեցության ուժերի որոշման վերաբերյալ խնդիրներ • Ուժահամակարգի պարզագույն տեսքի բերման վերլուծությունը • Կետի արագությունը և արագացումը շարժման տրման տարբեր եղանակների դեպքում, շարժման բնույթի պարզաբանումը • Պինդ մարմնի կետերի արագությունները և արագացումները մարմնի տարբեր շարժումների դեպքում • Կետի արագությունը և արագացումը բարդ շարժման դեպքում |
| <p>Դասընթացի գրականության ցանկ</p> | <ul style="list-style-type: none"> • Բուտենին Ն.Վ., Լունց Յա.Լ., Մերկին Դ.Ռ. Տեսական մեխանիկայի դասընթաց, հատոր 1, Լույս հրատարակչություն, 1982թ.: • Տարգ Ս.Ս. Տեսական մեխանիկայի համառոտ դասընթաց, Լույս հրատարակչություն, 1976թ.: • Մեշչերսկի Ի.Վ. Տեսական մեխանիկայի խնդիրների ժողովածու, Երևան, Լույս հրատարակչություն, 1990թ.: |

Ամբիոնի վարիչ, ֆակթ., դոցենտ՝

Գուրգենյան Ա.Ա.